# ՀԱՅ ԲԵՄԱՐՎԵՍՏԻ ՄԵԾԵՐԻՑ ՄԵԿԸ ԵՎ ԱՆԻԻ ԱՆԽՈՆՋ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

## ԼՐԱՆՈՒՄ Է ԱՐԱՄ ՎՐՈՒՅՐԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ



*"... Հանգուցյալ Քյուրքչյանից հետո ոչ ոք այնքան շատ բան չէ արել Անին լուսանկարելու կողմից, որքան արել է դերասան Ա. Վրույրը: Նա սիրող-լուսանկարիչ է, և առանձնապես սիրում է հնությունները, իսկ ամենից շատ, իհարկե, Անին: Մի քանի ամառ Վրույրը ապրել է Անիում, ծանոթացել նրա յուրաքանչյուր քարի, նրա դիրքերի բոլոր մանրամասնությունների հետ և ցույց տվել մի մեծ, տոկուն աշխատասիրություն: Քյուրքչյանը հրատարակեց հիսունից ոչ ավելի լուսանկարներ, իսկ Վրույրը մենակ, առանց օգնականի և մանավանդ առանց նյութական աջակցության, որ գործի ամենակարևոր կողմն է, հանել է երկու հարյուր տեսարան, որոնցից հարյուրը արդեն հրատարակել է: Հայ բեմի այդ համեստ և, ինչ ասել կուզեի, չքավոր գործիչը, կարելի է ասել, Անիի մեջ և Անիի շուրջը ոչինչ անծանոթ բան չէ թողել, այնպես որ նրա ժողովածուն ավերակների մայրաքաղաքի լիակատար, ամենամանրամասն տեսարանացույցը պիտի դառնա":*

*ԼԵՈ*

Հայ թատրոնի ականավոր դեմքերի՝ Ադամյանի, Սիրանույշի, Չմշկյանի, Փափազյանի, Աբելյանի և մյուսների կողքին իր արժանավայել տեղն է գրավում դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ Արամ Վրույրը:

Իր քառասունամյա ստեղծագործական կյանքի ընթացքում նա անդավաճան ծառայեց հայ բեմարվեստին: Վրույրի տաղանդի վառ բնորոշումը տվել է Վահրամ Փափազյանը՝ նրա բարեկամը և կրտսեր խաղընկերը բեմի վրա. "Վաղեմի Պլավտուսից մինչև Մոլիեր, Գոլդոնիից մինչև 19-րդ դարու կոմեդիան, Վրույրի հարազատ ներքնաշխարհի սնունդն էր, միևնույն ժամանակ և նրա գոյության կրակը, որով վառվեց Վրույրը ինքնավառ բոցի նման՝ մինչև մոխրացավ...":

Արամ Վրույրը (Արամ Մինասի Միանսարյան) ծնվել է 1863 թվականի մարտի 25-ին թատերական հարուստ ավանդույթներ ունեցող Պոլսում: Մեծացել է դերասանական միջավայրում և թատրոնի նշանավոր մյուս գործիչների նման նույնպես հնարավորություն ունեցել մանկուց ճաշակելու բեմարվեստի հմայքը, երբ առիթ է ունեցել իր ծննդավայր Պոլսի Բաղլար Բաշիի թատրոնում առաջին անգամ դիտելու տակավին երիտասարդ Ադամյանին "Թափառական հրեա" ներկայացման մեջ՝ Գաբրիելի դերում: Անգամ հասակակիցների հետ Վրույրը ներկայացումներ ցուցադրելու փորձեր արեց:

Իր բեմական գործունեությունը Վրույրը սկսել է 1882 թվականին, տասնինը տարեկան հասակում, Թիֆլիսում: Աշխատել է Թիֆլիսի, Բաքվի թատերախմբերում, հանդես է եկել Ռուսաստանի, Անդրկովկասի հայաշատ վայրերում: Լինելով կատակերգակ դերասան, անձնավորել է նաև դրամատիկ և բնութագրական կերպարներ: 1890-ին Պոլսում տեղի բարբառի է փոխադրել և բեմադրել Գաբրիել Սունդուկյանի "Պեպո": Կերպարները, նիստ ու կացը այնքան համահունչյուն էին տեղանքին՝ կարծես այն գրված լիներ հատուկ պոլսեցիների համար:

Վրույրը՝ Թիֆլիսում առաջին անգամ բեմ է հանել Հակոբ Պարոնյանի "Պաղտասար աղբարը" (1895 թ.):

Այդ օրը գրվեց հայ թատրոնի պատմության ուշագրավ էջերից մեկը՝ Պարոնյանի "Պաղտասար աղբարը" սկսեց իր բեմական կենսագրությունը՝ Վրույրի նախաձեռնությամբ: Հաջողությունն այնքան մեծ էր, որ մի քանի օր անց ներկայացումը կրկնվեց: Չկա ժամանակի հրատարակվող մի պարբերական, որ արձագանքած չլինի բեմադրությանը՝ հատկապես Վրույր-Պաղտիկին: Այնուհետև 1895-ին բեմադրել է "Մեծապատիվ մուրացկանները", խաղալով գլխավոր հերոսի դերը:

Արևելահայ թատրոնում նրա բեմադրությամբ ցուցադրվել են Մոլիերի "Տարտյուֆ", "Ագահը", "Ժորժ Դանդեն", "Դոն Ժուան" պիեսները: Խաղացել է մոլիերյան մի շարք դերեր՝ Օրգոն ("Տարտյուֆ"), Հարպագոն ("Ագահը"), Ագանարել ("Դոն Ժուան"), Արգան ("Երևակայական հիվանդը") և այլն:

Վրույրի լավագույն գործերից են նաև Քավոր Պետրոս ("Խաչագողի հիշատակարանը" ըստ Րաֆֆու), Դոն Գրիգորիո (Գոլդոնիի "Դոն Գրիգորիո"), Միլլեր-Շիլլեր ("Սեր և խարդավանք"), Լյապկին-Տյապկին (Գոգոլի "Ռևիզոր"), Զաքարիա (Լևոն Շանթի "Հին աստվածներ") դերակատարումները:

Սրանք Արամ Վրույրի կերտած այն կերպարներն են, որոնք մեծ ճանաչում բերեցին նրան և կարևոր նշանակություն ունեցան հայ թատրոնի պատմության համար: Եվ եթե այսքանով անգամ սահմանափակվեր Վրույրի վաստակը, բավական կլիներ նրա անունը ազգային բեմարվեստի մեծերի շարքը դասելու համար: Սակայն նրա դերացանկը թվարկված անուններով չի սահմանափակվում, դրանց թիվը հասնում է շուրջ 300-ի, որոնք ծնունդ առան Վրույրի բեմական քառասունամյա գործունեության տարբեր շրջաններում:

Որտեղ ասեք, որ չի եղել բեմական իր կերպարների հետ միասին՝ տարածելով հայ արվեստի շունչն ու գաղափարը:

"Նստակյաց դերասանների հետ չեմ կարողացել հաշտվել,- մի առիթով գրել է Վրույրը,- այլ այս արվեստը համարել եմ մի պաշտոն, որի պաշտոնյան անդադար պետք է ճամփորդե, առանց ի նկատի ունենալու, թե վերջիվերջո երկրագնդի որ անկյունում թողնելու է իր ոսկորները":

1910 թվականը կարևոր ժամանակահատված էր Վրույրի համար: Մոսկվայում, տեղի հայ սիրողների հետ սեփական բեմադրությամբ հանդես է գալիս Պաղտասար աղբարի, Աբիսողոմ աղայի (Պարոնյանի "Պաղտասար աղբար", "Մեծապատիվ մուրացկաններ"), Գրիգոր աղայի ("Վրթանես Փափազյանի "Ժայռ") դերերով, անկուսպ հիացումի պահեր պարգևելով տեղի հայ և այլազգի շատ հանդիսականների:

Բեմարվեստին ծառայելուն զուգընթաց ի հայտ եկան Արամ Վրույրի գրական հակումները: Նա թղթակցում էր ժամանակի բոլոր պարբերականներին, գրում էր պիեսներ, կատարում բեմականացումներ, դասական և ժամանակակից հեղինակների բեմադրությունների թարգմանություններ: Թատերագիտական արժեքավոր աշխատություններ են Պետրոս Ադամյանին և Դավիթ Թրյանի կյանքին ու գործունեությանը նվիրված նրա մենագրությունները:

Արամ Վրույրը նշանակալի վաստակ ունի նաև լրագրական գործում: 1891-1900 թվականներին նա աշխատակցում էր "Մուրճ" ամսագրին, եղել է "Կայծեր" թերթի (1910-1911) "Կարմիր աքլոր" երգիծական շաբաթաթերթի պատասխանատու քարտուղարը: 1907-1913-ին խմբագրել և հրատարակել է "Հուշարար" հանդեսը, որը կգալի դեր խաղաց ժամանակի թատերական կյանքի, հայ թատրոնի անցյալի լուսաբանման գործում, նպաստեց բեմարվեստի մասսայականացմանը: 1912-ին Արամ Վրույրը ընտրվում է հայ գրողների կովկասյան ընկերության անդամ: Բեմական ու գրական գործունեությանը զուգընթաց շուրջ երեք տասնամյակ նա զբաղվել է հնագիտական լուսանկարչությամբ: 1904-ից մինչև 1917 թվականը մասնակցել է Նիկողայոս Մառի գլխավորած արշավանքին: Երկարամյա գործունեությունը Մառի հետ, իր ժողովրդի պատմական անցյալի խոր ու համակողմանի ուսումնասիրումը Վրույրին դարձրել էին մեծանուն գիտնականի հուսալի օգնականներից մեկը: Արամ Վրույրը Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ էր:

Նրա հնագիտական հմտության մասին է վկայում այն փաստը, որ 1905 թ. պեղումների ժամանակ Անիի ավերված Գագկաշեն տաճարի տեղանքը հայտնաբերվել է նրա ցուցումով:

Այդ առթիվ իր "Անի" ուսումնասիրության էջերում Ն. Մառը գրում է. "Վաղարշապատի մոտ Խաչիկ վարդապետի կատարած պեղումները նյութ տվեցին առավել ստույգ որոշելու Գագկաշեն տաճարի ավերակների տեղը: Օգտվելով դրանցից, Վրույրը, որն իր ազատ ժամանակը նվիրում էր Անիի հնությունները լուսանկարելուն, առաջինը մատնանշեց Ծաղկոցաձորի վրա գտնվող այն բլուրը, ուր պետք է գտնվելիս լինեին Ներսեսի շինության պատճենը հանդիսացող տաճարի մնացորդը":

Տարիների տառապանքը քայքայել էր Արամ Վրույրի առողջությունը, 1924-ի մարտի 5-ին, 61 տարեկան հասակում վախճանվեց հայ բեմի ու մշակույթի երախտավորը, որի աճյունն ամփոփվեց Խոջիվանքում:

## Շարունակվում է "Զարյա" թերթի վաղաժամկետ բաժանորդագրությունը

*ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի վաղաժամկետ բաժանորդագրությունը 2013 թվականի 2-րդ կիսամյակի համար:*

*Մինչև մարտի 31-ը փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում դուք կարող եք բաժանորդագրվել հին գնով՝ 210 ռուբլի: Ապրիլի 1-ից կիսամյա բաժանորդագրության գինը կկազմի 222 ռուբլի:*